


1.2.5. Տրանսպորտ

Բեռնափոխադրումներ: 2003թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ նվազել է 6.1%-ով:

Բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-դեկտեմբեր	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2003թ. դեկտեմբեր	2003թ. դեկտեմբերը 2003թ. նոյեմբերի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա այդ թվում՝	7064.6	93.9	657.0	105.2
երկաթուղային տրանսպորտով	2125.5	105.3	187.4	117.1
արտահանվել են բեռներ	243.8	139.6	24.9	120.3
ներկրվել են բեռներ	990.3	100.0	119.6	127.3
ներհանրապետական փոխադրումներ	891.4	104.6	42.9	94.5
ավտոտրանսպորտով	4086.2	86.1	363.1	88.6
արտահանվել են բեռներ	103.7	99.5	8.3	87.4
ներկրվել են բեռներ	434.1	135.7	45.0	107.9
ներհանրապետական փոխադրումներ	3548.4	82.1	309.8	86.4
օդային տրանսպորտով¹	8.8	104.8	1.0	142.9
արտահանվել են բեռներ	3.4	109.7	0.3	150.0
ներկրվել են բեռներ	5.4	101.9	0.7	140.0
խողովակաշարային տրանսպորտով	844.1	112.4	105.5	195.4

Բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2003թ. հունվար-դեկտեմբերին, %




¹ Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները:
 «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-դեկտեմբերին»

2002թ. հունվար-դեկտեմբերին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտով փոխադրված բեռների տեսակարար կշիռը կազմել է 26.8%, ավտոմոբիլայինը՝ 63.1 %, օդայինը՝ 0.1%, խողովակաշարայինը՝ 10.0 %:

Ընդհանուր օգտագործման երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների բեռնափոխադրումների ծավալներն ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի¹

	Կազմակերպությունների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը ² , մարդ	Բեռնափոխադրումների ծավալը, հազ. տոննա	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %
Ընդամենը ՀՀ	68	13555	4827.8	101.8
<i>այդ թվում՝</i>				
մինչև 5 մարդ (գերփոքր)	9	25	21.0	57.4
6-15 մարդ (փոքր)	18	177	254.8	58.2
16-30 մարդ (միջին)	12	256	175.9	120.5
31 և ավելի մարդ (խոշոր)	29	13097	4376.1	106.2

Բեռնափոխադրումների ծավալների կառուցվածքն ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի 2003թ. հունվար-դեկտեմբերին, %



Երկաթուղային տրանսպորտ: 2003թ. հունվար-դեկտեմբերին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ աճել է 5.3%-ով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 46.6% (2002թ. հունվար-դեկտեմբերի 49.1%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 11.5% (2002թ. հունվար-դեկտեմբերի 8.6%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 41.9% (2002թ. հունվար-դեկտեմբերի 42.3% -ի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների 2003թ. հունվար-դեկտեմբերին 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ հանքաքար գունավոր մետաղների փոխադրման ծավալն ավելացել է 72.9%-ով, սև մետաղների ջարդոնինը՝ 16.2%-ով, հացահատիկի և աղացվող մթերքինը՝ 2.2%-ով: Սև մետաղների փոխադրման ծավալը նվազել է 75.9%-ով, քարածխինը՝ 50.0%, անտառային բեռներինը (գերան, փայտանյութեր, ֆաներա և այլն)՝ 36.4%-ով, ցեմենտինը՝ 33.2%-ով, հանքային շինարարական նյութերինը՝ 20.6%-ով, քիմիական և հանքային պարարտանյութերինը՝ 15.0%-ով, նավթ և նավթամթերքինը՝ 12.7%-ով:

¹ Բեռնափոխադրումների ծավալներն ըստ ընդհանուր օգտագործման տրանսպորտի առանձին տեսակների, ներկայացված են «Հետաքրքրաշարժ վիճակագրություն» հավելվածում :

² Սույն ցուցանիշը ներառում է նաև երկաթուղային, ավտոմոբիլային և օդային տրանսպորտի կազմակերպությունների այն աշխատողների թվաքանակը, որոնք իրականացնում են ուղևորափոխադրումներ: «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-դեկտեմբերին» 49

1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

Վազոնների միջին օրական բեռնաթափումը 2003թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 88 վազոն և 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ ավելացել է 7միավորով, իսկ բեռնումը կազմել է 54 վազոն և ավելացել 5 միավորով: Նույն ժամանակաշրջանում վազոնապտույտը կազմել է 10.5 օր և 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ դանդաղել է 1.9 օրով:


Ավտոմոբիլային տրանսպորտ: 2003թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-դեկտեմբերի ցուցանիշի նկատմամբ նվազել է 13.9%-ով, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 10.6% (2002թ. հունվար-դեկտեմբերի 6.7%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 10.9% (2002թ. հունվար-դեկտեմբերի 9.2%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 2.5% (2002թ. հունվար-դեկտեմբերի 2.2%-ի դիմաց), դրանից ՀՀ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 12.0% (2002թ. հունվար-դեկտեմբերի 7.7%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումների՝ 86.9% (2002թ. հունվար-դեկտեմբերի 91.1% -ի դիմաց):

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնափոխադրումների ծավալն ըստ ՀՀ մարզերի

	2003թ. հունվար-դեկտեմբեր, հազ.տոննա	2003թ.հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ,%
ք. Երևան	631.3	83.4
Արագածոտն	339.0	162.0
Արարատ	147.5	53.0
Արմավիր	113.7	80.6
Գեղարքունիք	262.8	80.8
Լոռի	128.0	112.6
Կոտայք	555.6	61.8
Շիրակ	703.3	108.4
Սյունիք	267.7	80.6
Վայոց ձոր	48.9	29.4
Տավուշ	350.6	87.6
Ընդամենը ՀՀ	3548.4	83.1

Օդային տրանսպորտ: 2003թ. հունվար-դեկտեմբերին օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը 2002թ. հունվար-դեկտեմբերի ցուցանիշի նկատմամբ աճել է 4.8%-ով, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 61.4% (2002թ. հունվար-դեկտեմբերի 63.1% դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 38.6% (2002թ. հունվար-դեկտեմբերի 36.9%-ի դիմաց): Օդային տրանսպորտով փոխադրված բեռների 27.3%-ը (2.4 հազ.տոննա) իրականացվել է հայաստանյան շարժակազմով (2002թ. հունվար-դեկտեմբերի 32.1%-ի կամ 2.7 հազ. տոննա բեռի դիմաց):

Կանոնավոր չվերթներով բեռնափոխադրումների ծավալն ըստ հաղորդակցության ուղիների, %



խողովակաշարային տրանսպորտ: 2003թ. հունվար-դեկտեմբերին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-դեկտեմբերի ցուցանիշի նկատմամբ աճել է 12.4%-ով:

Բեռնաշրջանառություն: 2003թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ աճել է 13.9%-ով:

Բեռնաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-դեկտեմբեր	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2003թ. դեկտեմբեր	2003թ. դեկտեմբերը 2003թ. նոյեմբերի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ այդ թվում՝	1749.3	113.9	202.2	164.5
երկաթուղային տրանսպորտով	529.2	117.1	52.0	120.1
ավտոտրանսպորտով	78.9	115.7	7.7	114.9
օդային տրանսպորտով	5.5	94.8	0.6	2.0անգամ
խողովակաշարային տրանսպորտով	1135.7	112.4	141.9	195.4

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնաշրջանառության ծավալն ըստ ՀՀ մարզերի

	2003թ. հունվար-դեկտեմբեր, մլն. տոննա-կմ	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %
ք. Երևան	16.2	81.4
Արագածոտն	5.6	155.6
Արարատ	8.2	132.3
Արմավիր	2.3	104.5
Գեղարքունիք	4.7	120.5
Լոռի	2.0	117.6
Կոտայք	11.1	103.7
Շիրակ	10.8	113.7
Սյունիք	4.1	93.2
Վայոց ձոր	2.0	74.1
Տավուշ	3.4	100.0
Ընդամենը ՀՀ	70.4	103.2


Ուղևորափոխադրումներ: 2003թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-դեկտեմբերի ցուցանիշի նկատմամբ աճել է 11.0%-ով:

Ուղևորափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-դեկտեմբեր	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2003թ. դեկտեմբեր	2003թ. դեկտեմբերը 2003թ. նոյեմբերի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ այդ թվում՝	174085.1	111.0	15423.4	99.9
երկաթուղային տրանսպորտով	1086.0	86.4	71.1	88.9
ավտոտրանսպորտով	148746.5	114.7	13186.2	99.7
որից՝ քեթև մարդատար տաքսիներով	1231.5	173.6	151.3	111.4
օդային տրանսպորտով ¹	943.1	108.0	92.8	116.7
էլեկտրատրանսպորտով	23309.5	93.0	2073.3	101.1

¹ Ցուցանիշներում ներառվա ծ են մաս այլ երկրների ինքնաթիռներով իրականացված ուղևորափոխադրումները: «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-դեկտեմբերին»

Ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2003թ. հունվար-դեկտեմբերին, %




2002թ. հունվար-դեկտեմբերին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտով փոխադրված ուղևորների տեսակարար կշիռը կազմել է 0.8%, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 82.7%, օդային տրանսպորտինը 0.5% և էլեկտրատրանսպորտինը 16.0%:

Ընդհանուր օգտագործման էլեկտրատրանսպորտով, երկաթուղային, ավտոմոբիլային և օդային տրանսպորտով ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ուղևորափոխադրումների ծավալներն ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի¹

	Կազմակերպությունների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը ² , մարդ	Ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ	2003թ. հունվար-դեկտեմբերին 2002թ. հունվար-դեկտեմբերին նկատմամբ, %
Ընդամենը ՀՀ	289	14893	123330.9	120.2
<i>այդ թվում՝</i>				
մինչև 5 մարդ (գերփոքր)	96	304	2541.8	149.7
6-15 մարդ (փոքր)	84	789	10504.8	190.3
16-30 մարդ (միջին)	56	1284	33023.3	100.0
31 և ավելի մարդ (խոշոր)	53	12516	77261.0	103.6

Ուղևորափոխադրումների ծավալների կառուցվածքն ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի 2003թ. հունվար-դեկտեմբերին, %



¹ Ուղևորափոխադրումների ծավալներն ըստ ընդհանուր օգտագործման տրանսպորտի առանձին տեսակների ներկայացված են «Հետաքրքրաշարժ վիճակագրություն» հավելվածում :

² Սույն ցուցանիշը ներառում է նաև երկաթուղային, ավտոմոբիլային և օդային տրանսպորտի կազմակերպությունների այն աշխատողների թվաքանակը, որոնք իրականացնում են բեռնափոխադրումներ:


Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալն ըստ ՀՀ մարզերի

	2003թ. հունվար-դեկտեմբեր, հազ. մարդ	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %
ք. Երևան	119092.6	117.2
Արագածոտն	1023.2	94.9
Արարատ	2970.0	110.2
Արմավիր	3742.4	112.6
Գեղարքունիք	2079.3	103.8
Լոռի	4919.8	96.0
Կոտայք	4008.9	129.9
Շիրակ	7483.8	103.4
Սյունիք	2399.7	96.8
Վայոց ձոր	47.5	115.3
Տավուշ	979.3	100.5
Ընդամենը ՀՀ	148746.5	114.7

Օդային տրանսպորտ: 2003թ. հունվար-դեկտեմբերին օդային տրանսպորտով փոխադրվել է 943.1 հազ. ուղևոր, որի 39.3%-ը (370.8 հազ. ուղևոր) կազմել է հայաստանյան շարժակազմով իրականացված ուղևորափոխադրումների ծավալը:

Ի տարբերություն 2002թ. հունվար-դեկտեմբերի (1.4 հազ. ուղևոր), 2003թ. հունվար-դեկտեմբերին հայաստանյան շարժակազմով չարտերային չվերթներով կատարված ուղևորափոխադրումները կազմել է 0.1 հազ. ուղևոր, որը բաժին է ընկել միայն ԱՊՀ երկրների հաղորդակցության թռիչքներին:

Կանոնավոր չվերթներով ուղևորափոխադրումների ծավալն ըստ հաղորդակցության ուղիների, %



Ինքնաթիռների, ուղևորաթիռների չվացուցակով կատարված չվերթները

	2003թ. հունվար-դեկտեմբեր	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %
Չվացուցակով նախատեսված չվերթների քանակը, միավոր	6343	105.9
Փաստացի մեկնած ինքնաթիռների քանակը, միավոր	6889	111.7
<i>այդ թվում՝</i>		
ուշացումով	2836	154.8
որից՝ եղանակի պատճառով	207	96.7
վառելիքի պատճառով	31	48.4
այլ պատճառներով	2598	167.2

1. ԻՐԱՎԱՆ ՀԱՏՎԱԾ

2003թ. հունվար-դեկտեմբերին օդային տրանսպորտով փաստացի մեկնած ինքնաթիռների քանակը չվացուցակով նախատեսված չվերթների քանակի նկատմամբ գերազանցել է 8.6%-ով (2002թ. հունվար-դեկտեմբերի 3.0%-ի դիմաց): Ընդ որում, ԱԳՀ երկրների հետ հաղորդակցությամբ կատարվել է 5628 թռիչք, այլ երկրների միջև 1261թռիչք:


Փաստացի կատարված չվերթներից 41.2% կատարվել է ուշացումով, որից` 7.3% անբարենպաստ եղանակի, 1.1%` վառելիքի, իսկ մնացածը` այլ պատճառներով:

Էլեկտրատրանսպորտ: 2003թ. հունվար-դեկտեմբերին էլեկտրատրանսպորտով փոխադրված ուղևորների ծավալը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ նվազել է 7.0%-ով:

Ուղևորափոխադրումների ցուցանիշներն ըստ էլեկտրատրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-դեկտեմբեր	2003թ.հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2003թ. դեկտեմբեր	2003թ.դեկտեմբերը 2003թ. նոյեմբերի նկատմամբ, %
Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, ընդամենը, հազ.մարդ	23309.5	93.0	2073.3	101.1
<i>այդ թվում`</i>				
մետրոպոլիտենով	16228.1	107.4	1431.2	97.6
տրամվայով	2421.3	66.6	228.3	113.3
տրոլեյբուսով	4066.4	71.5	355.8	109.6
ճոպանուղով	593.7	96.6	58.0	99.8

Ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ էլեկտրատրանսպորտի առանձին տեսակների 2003թ. հունվար-դեկտեմբերին, %



2002թ. հունվար-դեկտեմբերին էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների տեսակարար կշիռը կազմել է 60.3 %, տրոլեյբուսով` 22.7 %, տրամվայով` 14.5 % և ճոպանուղով` 2.5 %:

Ուղևորաշրջանառություն: 2003թ. հունվար-դեկտեմբերին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ աճել է 4.1 %-ով:

Ուղևորաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-դեկտեմբեր	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2003թ. դեկտեմբեր	2003թ. դեկտեմբերը 2003թ. նոյեմբերի նկատմամբ, %
Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղ-կմ այդ թվում՝	2724.6	104.1	266.5	116.9
երկաթուղային տրանսպորտով	41.2	85.1	2.6	96.3
ավտոտրանսպորտով	1867.0	109.1	175.8	107.5
որից՝ թեթև մարդատար տաքսիներով	8.9	178.0	1.2	120.0
օդային տրանսպորտով	724.3	95.8	79.9	148.5
էլեկտրատրանսպորտով	92.1	90.9	8.2	103.8

Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալն ըստ ՀՀ մարզերի

	2003թ. հունվար-դեկտեմբեր, մլն. ուղևոր- կմ	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %
ք. Երևան	1169.2	112.1
Արագածոտն	31.1	95.7
Արարատ	70.0	104.8
Արմավիր	87.6	109.0
Գեղարքունիք	46.8	98.1
Լոռի	109.6	96.0
Կոտայք	95.8	120.2
Շիրակ	184.1	105.6
Սյունիք	47.6	97.5
Վայոց ձոր	3.4	125.9
Տավուշ	21.8	100.0
Ընդամենը ՀՀ	1867.0	109.1

Ուղևորաշրջանառության ցուցանիշներն ըստ էլեկտրատրանսպորտի առանձին տեսակների

	2003թ. հունվար-դեկտեմբեր	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2003թ. դեկտեմբեր	2003թ. դեկտեմբերը 2003թ. նոյեմբերի նկատմամբ, %
էլեկտրատրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. ուղ-կմ այդ թվում՝	92.1	90.9	8.2	103.8
մետրոպոլիտենով	61.7	107.5	5.5	100.0
տրամվայով	10.9	66.5	1.0	106.7
տրոլեյբուսով	19.1	70.5	1.6	126.7
ճոպանուղով	0.4	100.0	0.1	100.0

Տրանսպորտային պատահարներ: Հանրապետությունում 2003թ. հունվար-դեկտեմբերին ճանապարհատրանսպորտային պատահարները (ԳՏՊ) 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ աճել է 2.3 %-ով:

ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշները

	2003թ. հունվար-դեկտեմբեր	2003թ. հունվար-դեկտեմբերը 2002թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2003թ. դեկտեմբեր	2003թ. դեկտեմբերը 2003թ. նոյեմբերի նկատմամբ, %
ճանապարհատրանսպորտային պատահարներ, ընդամենը	1025	102.3	77	60.6
Զոհվել են, մարդ	252	107.2	28	93.3
Վիրավորվել են, մարդ	1294	106.7	102	60.7

2004թ. հունվարի 1-ի դրությամբ ճՏՊ-ից չեն բացահայտվել 140-ը, որոնց հետևանքով զոհվել են 33 և վիրավորվել 112 մարդ:

45 ճՏՊ-ից, որոնք կատարվել են վարորդների անսթափ վիճակում գտնվելու պատճառով, զոհվել են 15 և վիրավորվել 63 մարդ:

2003թ. հունվար-դեկտեմբերին գրանցված 1025 ճՏՊ-ից 59.1%-ը կատարվել է քաղաքային և գյուղական բնակավայրերում (զոհվել են 103 և վիրավորվել 722 մարդ), 39.9%-ը՝ բնակավայրերից դուրս ավտոմոբիլային ճանապարհներին (զոհվել են 146 և վիրավորվել 556 մարդ), 1.0%-ը՝ այլ վայրերում (զոհվել են 3 և վիրավորվել 16 մարդ):